

ԱՆՔԼԵՐԵՆԻ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ*

Լուսինե Մաղոյան
Երևանի պետական համալսարան

Սույն հոդվածը նվիրված է բարդ նախադասության շարահյուսական առանձնահատկությունների ուսումնասիրությանը անգլերեն և հայերեն լեզուներում:

Ավանդական մոտեցմամբ, բարդ նախադասություն ասելով, նկատի ունենք երկու և ավելի պարզ նախադասությունների միություն, կամ պարզ նախադասություններին քիչ թե շատ նման բաղադրիչների միություն: Այսինքն, բարդ նախադասությունն արտահայտում է մեկից ավելի մտքեր և ունի մի քանի ստորոգում, այն ինքնուրույն ամբողջական միավոր չէ, այլ նախադասությունների ինքնատիպ միություն կամ համադրություն:

Հոդվածն անդրադառնում է բարդ նախադասության՝ քերականագիտության մեջ հայտնի լեզվաբանների կողմից առաջարկված տարբեր դասակարգումների, որոնք տարբերվում են ավանդական ընդունված մոտեցումներից:

Բանալի բառեր. քերականություն, բարդ նախադասություն, ստորադասություն, համադասություն, շարահարություն:

Ներածություն

Բազմաթիվ լեզվաբաններ փորձ են արել տալ նախադասության տարբեր սահմանումներ, սակայն մինչ օրս չկա մեկ համապարփակ և լիարժեք սահմանում: Ինչպես նշել է Ա. դե Գրոուտը. *Բոլորը գիտեն, թե ինչ է նախադասությունը, բայց գիտությունը դժվարանում է սահմանել այն: Ցանկացած մարդ կարող է նախադասության օրինակներ բերել, բայց չկա նախադասության հստակ սահմանում* (Baradyl 2006:216):

Ելնելով նախադասության ավանդական սահմանումներից՝ կարող ենք նշել, որ նախադասությունը մտքի ձևավորման, հաղորդման և հաղորդակցման կարևորագույն միավոր է:

Բարդ նախադասության կառուցվածքն ու բաղադրիչների հերթականությունը

Կառուցվածքային տեսանկյունից բարդ նախադասություն ասելով, նկատի ունենք երկու և ավելի պարզ նախադասությունների միություն, կամ պարզ նախադասություններին քիչ թե շատ նման բաղադրիչների միություն: Այսինքն, բարդ նախադասությունն արտահայտում է մեկից ավելի մտքեր և ունի մի քանի ստորոգում: Բարդ նախադասությունը ինքնուրույն ամբողջական միավոր չէ, այլ նախադասությունների ինքնատիպ միություն կամ համադրություն:

Եթե բարդ նախադասությունը դիտարկենք որպես նախադասություն, ապա հարց է ծագում. ի՞նչ են նրա բաղադրիչները, արդյո՞ք դրանք ևս նախադասությո՞ւն:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 27.09.2016:

յուն են: Հարցն ունի առնվազն երեք տարբեր մոտեցմամբ պատասխաններ, որոնք ներկայացված են ստորև:

Ցանկացած տիպի բարդ նախադասության կազմում պարզ նախադասություն է, որն այդ բարդ ամբողջության մաս է կազմում՝ չկորցնելով նախադասության էական հատկանիշները, քանի որ հակառակ դեպքում այն կվերածվեր նախադասությունից տարբեր մեկ այլ միավորի (Бархударов, Колшанский 1955): Մեկ այլ տեսակետի համաձայն բարդ նախադասության մասերը նախադասություն չեն (Почелов 1950): Եվ կա մի երրորդ մոտեցում, ըստ որի բարդ նախադասության բաղադրիչները քիչ թե շատ նույնական են պարզ նախադասությունների (Виноградов 1955):

Անգլերենում և հայերենում այս խնդիրը լուծված է երկու տարբեր տերմինների ներմուծման շնորհիվ. *sentence*՝ նախադասության համար և *clause*՝ բարդ նախադասության բաղադրիչի՝ այսինքն երկրորդական նախադասության համար, որը ձևով կարող է համարժեք լինել նախադասությանը, բայց հաղորդակցական առումով ինքնուրույն չէ:

Ինչ վերաբերում է բարդ նախադասության իմաստին, այն ձևավորվում է նրա բաղադրիչների և դրանք միավորող շաղկապի իմաստներից: Բարդ նախադասության բաղադրիչների հերթականության փոփոխությունը առաջին հերթին կապված է բարդ նախադասությունների՝ որպես հաղորդակցական միավոր կառուցման հետ, բաղադրիչների այս կամ այն հերթականությունը որոշվում է խոսքային միջավայրով, նախադասության հաղորդակցական հրահանգով և արտահայտում է նրա ակտուալ մասնատումը: Սովորաբար պահպանվում է նախադասության ակտուալ մասնատման օբյեկտիվ հերթականությունը. նախադասության ակտուալ առումով ավելի նշանակալի բաղադրիչների մասը դրվում է ետադաս դիրքում:

Բարդ նախադասության բաղադրիչների բառերի հերթականությունը միշտ չէ, որ համընկնում է իմաստով նույնական պարզ նախադասության բառերի հերթականության հետ: Սա պայմանավորված է բարդ նախադասության բաղադրիչների փոխկապակցվածությամբ, երբ մի մասի բաղադրիչների որոշակի տեղակայումը պահանջում է մյուսի բաղադրիչների որոշակի դասավորություն:

Մի շարք լեզվաբաններ (ինչպես օրինակ, Լակոֆը) կարծում են, որ բարդ նախադասության բաղադրիչների համադասական կապի դեպքում դրանց հաջորդականությունը կարելի է փոխել առանց ամբողջ նախադասության ընդհանուր իմաստի խախտման, մինչդեռ ստորադասության դեպքում դա անհնար է: Ինչևէ, բարդ ստորդասական նախադասության շատ տեսակներ թույլ են տալիս տեղաշարժել բաղադրիչները, և բացի այդ, միշտ չէ, որ հնարավոր է տեղաշարժել բարդ համադասական նախադասության բաղադրիչները: Որոշ դեպքերում հենց բաղադրիչների հերթականությունն է իմաստաբանական առումով կարևոր: Սա նկատվում է այն դեպքերում, երբ բարդ համադասական նախադասության բաղադրիչների հերթականությունը համապատասխանում է դեպքերի հերթականությանը: Որոշ դեպքերում նախադասության բաղադրիչների տեղափոխումը կարող է հանգեցնել նախադասության իմաստի փոփոխության կամ անգամ նախադասությունը դարձնել անիմաստ:

Ցանկացած տիպի բարդ նախադասության համար կազմակերպող գործոն է համարվում խոսողի ինտոնացիան, արտասանական երանգավորումը:

Բարդ նախադասության բաղադրիչների միջև կապի առաջին ցուցիչը շաղկապն է, որն արդեն ինքնին ցույց է տալիս երկու նախադասությունների հարաբերություն: Ըստ շաղկապի առկայության կամ բացակայության, բոլոր բարդ նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ շաղկապով և անշաղկապ, որոնք էլ իրենց հերթին, ըստ իրենց կազմում եղած բաղադրիչ նախադասությունների միջև դրսևորվող շարահյուսական հարաբերությունների բնույթի, բաժանվում են երկու խմբի՝ բարդ համադասական և բարդ ստորադասական:

Լևիցկին (2002), խոսելով բարդ նախադասության ստորոգելիության մասին, նշում է, որ թե՛ բարդ նախադասության, և թե՛ պարզ նախադասության դեպքում հարկավոր է տարբերակել քերականական ստորոգելիությունը (որի ցուցիչը շաղկապն է) և հաղորդակցական ստորոգելիությունը (որի ցուցիչը բարդ նախադասության բաղադրիչների հերթականությունն է) և հնչերանգը բանավոր խոսքում: Հնչերանգը և բաղադրիչների հերթականությունը հատկապես կարևոր են անշաղկապ նախադասությունների դեպքում:

Բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններ

Թե՛ անգլերենում և թե՛ հայերենում նախադասությունների համադասական կապակցության դեպքում բաղադրիչները հիմնականում պահպանում են շարահյուսական անկախությունն ու իմաստային ինքնուրույնությունը, իսկ ստորադասական կապակցության դեպքում այն բաղադրիչը, որի կազմում գտնվում է ստորադասական շաղկապը կամ հարաբերական դերանունը, զուրկ է մնան ինքնուրույնությունից ու անկախությունից: Բարդ համադասական նախադասության մեջ բաղադրիչները կարող են կապակցվել երկու եղանակով՝ սպասարկու բառերով, որոնք համադասական շաղկապներն են և առանց շաղկապների՝ շարահարությամբ: Բարդ ստորադասական նախադասության կազմի մեջ մտնող նախադասություններն իրար հետ կապակցված են ստորադասական շաղկապներով և հարաբերական դերանուններով (Եգեկյան 2005:353-355):

Եթե բարդ ստորադասական նախադասություններն ընդունվում են քերականագետների մեծ մասի կողմից, ապա նույնը չի կարելի ասել բարդ համադասական նախադասությունների մասին: Որոշ լեզվաբաններ (ինչպես օրինակ, Սեպիրը, Դանեշը) ընդհանրապես փորձ են արել ժխտել բարդ համադասական նախադասությունների գոյությունը որպես առանձին շարահյուսական միավոր:

Փորձենք հակիրճ անդրադառնալ բարդ նախադասությունների ավանդական դասակարգումից տարբերվող երկու ուղղությունների:

Առաջին ուղղության հետևորդները շեշտը դնում են բարդ նախադասության ձևի և կառուցվածքի առանձնահատկությունների վրա: Ըստ այդ ուղղության հետևորդների, բարդ նախադասություններում շաղկապավոր և անշաղկապ կապերի հակադրումը ավելի էական է, քան ստորադասության և համադասության հակադրությունը: Արդյունքում, շաղկապներով նախադասությունները հակադրվում են անշաղկապ նախադասություններին, իսկ ստորադասությունն ու համադասությունը տարբերակվում են միայն շաղկապավոր նախադասությունների մեջ: Երբ փորձում ենք այս տեսությունը գործնականում կիրառել ժամանակակից անգլերենի բարդ նախադասությունների վերլուծության ժամանակ, տեսնում ենք, որ, օրինակ, անգլերեն *He said he would do it* նախադասությունը սկզբունքորեն չի տարբերվում դրան համարժեք *that* շաղկապով նախադասությունից: Նման տիպի նախադասություններում, անգլերեն լեզվի նորմերի համաձայն,

հնարավոր է բաց թողնել *that* շաղկապը, ինչը չի կարելի ասել հայերենի համար, որտեղ նախընտրելի ճիշտ տարբերակը *որ* շաղկապով տարբերակն է՝ *Նա աւսաց, որ դա կանի*:

Երկրորդ ուղղության ներկայացուցիչները, որոնց թվում է Իոֆիկը (1968), ընդգծելով լեզվաբանության մեջ նախադասության ամբողջականության հատկանիշը, գալիս է այն եզրահանգմանը, որ բարդ համադասական նախադասությունները չունեն այդ հատկանիշը և հանգիստ բաժանվում են ինքնուրույն, անկախ նախադասությունների, որոնցից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ որպես քերականորեն ավարտուն հաղորդակցման միավոր:

Իոֆիկը (1968) կիրառում է *միաստորոգյալ նախադասություն* և *բազմաստորոգյալ նախադասություն* եզրերը, որոնք արտացոլում են իրենց կազմում եղած ստորոգելիական միավորների քանակը և մոտավորապես համապատասխանում են պարզ նախադասություն և բարդ նախադասություն եզրույթներին: Ըստ Իոֆիկի, համադասության միջոցն ապահովում է բազմաստորոգյալ նախադասության ամբողջականությունը միայն ընդհանուր ստորադասված կամ ստորադասող անդամի առկայության դեպքում: Այսպիսով՝ ըստ Իոֆիկի, բարդ համադասական նախադասությունները բազմաստորոգյալ նախադասության մեջ չեն մտնում:

Փոխակերպական քերականության մեջ, որպես կանոն, բարդ համադասական նախադասությունները համասեռ անդամով նախադասությունների հետ միասին դիտարկվում են որպես միավորման (conjoining) փոխակերպության արդյունք: Օրինակ՝ *and*-ով միավորված երկու հենքային կառույցներից կամ շղթաներից (*I went downtown* և *I bought a hamburger*) դուրս է բերվում *I went downtown and I bought a hamburger* բարդ համադասական նախադասությունը: Եթե երկու նախադասությունների ենթակաները նույնն են, ապա հնարավոր է երկրորդ ենթակայի զեղչում՝ *I went downtown and bought a hamburger*: Այս երկու նախադասությունների միջև իմաստային էական տարբերություն չի նկատվում:

Ստորադասական նախադասությունները, փոխակերպական քերականության տեսանկյունից, դիտարկվում են որպես ներառման (embedding) փոխակերպման արդյունք: Օրինակ՝ *When I went downtown, I bought a hamburger*, որտեղ առաջին շղթան ներառվում է երկրորդ գլխավորի մեջ *when* բառի միջոցով:

Եզրակացություն

Ամփոփելով մեր հետազոտության արդյունքները՝ կարող ենք նշել, որ անգլերենի և հայերենի բարդ նախադասություններն իրենց շարահյուսական կառուցվածքով էապես չեն տարբերվում միմյանցից, սակայն որոշ դեպքերում հայերենը ավելի ձկուն է բաղադրիչների հերթկանության շրջելիության առումով, մինչդեռ անգլերենը առանձնանում է նրանով, որ գրեթե հավասարապես ընդունում է միևնույն բարդ նախադասության թե՛ շաղկապավոր, թե՛ անշաղկապ տարբերակը առանց իմաստային էական տարբերության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գարեգինյան, Գ.Լ. (1984) *Ժամանակակից հայոց լեզու*: Երևան: ԵՊՀ հրատ.:
2. Եզեկյան Լ. (2005) *Հայոց լեզու*: Երևան: ԵՊՀ հրատ.:

3. Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: ԵՊՀ հրատ.
4. Blokh, M.Y. (2006) *A Course in Theoretical English Grammar*. M.: Visšaja škola.
5. Chomsky, N. (1965) *Aspects of the Theory of Syntax*. Cambridge: The M.I.T. Press.
6. Адмони, В. Г. (1964) *Основы теории грамматики*. М.- Л.: Наука.
7. Бархударов, Л.С., Колшанский, Г.В. (1958) *К проблеме структуры сложного предложения*. / Сб. Статей. М. :. Изд. Моск. ун-та.
8. Вардоль, И.Ф. (2006) *Основы описательной лингвистики синтаксис и супрасинтаксис*. URSS, М.: Ленанд.
9. Ве́йхман, Г.А. (2002) *Новое в грамматике современного английского языка*. М.: Астрель.
10. Виноградов, В.В. (1955) *Основные вопросы синтаксиса предложения*. // Вопросы грамматического строя: / Сб. Статей. М.: Изд. АН СССР.
11. Левицкий, Ю. А. (2002) *Основы теории синтаксиса*. URSS, М.: КомКнига.
12. Иофик, Л.Л. (1968) *Сложное предложение в ново-английском языке*. Ленинград: Изд. Ленинградского ун-та.
13. Поспелов, Н.С. (1950) *О грамматической природе сложного предложения*. / Сб. статей. М.: Учпедгиз.

Composite Sentences in the Armenian and English Languages

The present paper aims at studying the syntactic characteristics of composite sentences in Armenian and English. The composite sentence, as different from the simple sentence, is formed by two or more predicative lines. Being a polypredicative construction, it expresses a complicated act of thought and reflects some intellectual efforts closely combined with one another. Each predicative line makes up a clause. The article studies several approaches to classification of composite sentences which differ from the accepted traditional ones.

Сложные предложения в английском и армянском языках

Данная статья рассматривает синтаксические особенности сложных предложений в английском и армянском языках. Сложными называются предложения, состоящие из двух и более грамматических основ, связанных в единое целое по смыслу, грамматически и интонационно. В сложных предложениях составляющие их простые предложения не просто выступают обособленными единицами, но характеризуются смысловой и интонационной завершенностью, и зачастую содержат отсылки друг к другу. В статье изучаются разные подходы к классификации сложных предложений предложенные ведущими лингвистами.